Հավելված
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2018 թվականի դեկտեմբերի 12-ի №458 որոշման

«Հավելված
Հաստատված է Հայաստանի Հանրապետության բնական
մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի
2003 թվականի սեպտեմբերի 1-ի №50Ա որոշմամբ

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0108 լիցենզիայի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. ԼԻՑԵՆԶԻԱՅՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն լիցենզիայում օգտագործված հիմնական հասկացություններն են.

1) **Առևտրային կանոններ՝** Հանձնաժողովի կողմից հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններ, որոնք կանոնակարգում են էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցների առևտրային փոխհարաբերությունները.
2) **Լիցենզավորված անձ՝** «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերություն.
3) **Հանձնաժողով՝** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
4) **Շուկայի կանոններ՝** Հանձնաժողովի հաստատած էլեկտրաէներգետիկական շուկայի առևտրային և ցանցային կանոններ.
5) **Ցանցային կանոններ՝** Հանձնաժողովի կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոններ, որոնք կանոնակարգում են հաղորդման և բաշխման ցանցերի զարգացման պլանավորման, կառավարման, կարգավորման և այդ ցանցեր մուտքի ապահովման հետ կապված հարաբերությունները:

2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ (ՎԱՅՐԸ)

2. Սույն լիցենզիան ուժի մեջ է մտնում 2003 թվականի սեպտեմբերի 1-ից:

3. Սույն լիցենզիան գործում է մինչև 2033 թվականի սեպտեմբերի 1-ը:

4. Սույն լիցենզիայի՝ սույն գլխով նախատեսված ժամանակահատվածի (ժամկետի) երկարաձգման անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան հայտ է ներկայացնում Հանձնաժողով:

5. Լիցենզավորված գործունեության իրականացման աշխարհագրական տարածքը (գործունեության վայրը) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի, Կոտայքի մարզերի և Երևան քաղաքի վարչական տարածքներն են:

3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է սույն լիցենզիայով սահմանված ժամկետում (ժամանակահատվածում) Սևան, Հրազդան, Արգել, Արզնի, Քանաքեռ, Երևանի ՀԷԿ-1, Երևանի ՀԷԿ-3 հիդրոէլեկտրակայաններում (այսուհետ՝ Կայաններ) արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն)՝ սույն լիցենզիայի պայմանների №1 հավելվածով ամրագրված ագրեգատներով (սարքավորումներով)։

7. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում՝

1) մեծածախ շուկայում վաճառել կամ արտահանել իր արտադրած էլեկտրական էներգիան (հզորությունը)՝ Շուկայի կանոնների համաձայն,
2) էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում գնել էլեկտրական էներգիա (հզորություն), եթե սեփական արտադրության էլեկտրական էներգիայով չի կարողանում կատարել իր պայմանագրային պարտականությունները։

8. Լիցենզավորված անձը Հանձնաժողովի սահմանած սակագներով պարտավոր է էլեկտրական էներգիա վաճառել երաշխավորված մատակարարին, մատակարարներին և որակավորված սպառողներին՝ Շուկայի կանոններով նախատեսված դեպքերում և կարգով։ Մնացած դեպքերում Լիցենզավորված անձը էլեկտրական էներգիան կարող է վաճառել շուկայի մասնակիցներին կամ արտահանել չկարգավորվող գներով։

9. Լիցենզավորված անձը էլեկտրական էներգիան կարող է օգտագործել սեփական կարիքների համար՝ միայն էլեկտրական էներգիայի արտադրության հետ կապված պահանջների բավարարման համար, եթե այլ բան սահմանված չէ Շուկայի կանոններով կամ Լիցենզավորված անձի հետ պետություն-մասնավոր գործընկերության շրջանակում կնքված գործարքով։

10. Հանձնաժողովի կողմից Կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) սակագինը սահմանվում և վերանայվում է՝ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Շուկայի կանոններով, Հանձնաժողովի իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով,

11. Հանձնաժողովի կողմից Կայաններից առաքվող էլետրական էներգիայի (հզորության) սակագներ չեն սահմանվում, եթե Կայանները Շուկայի կանոններով սահմանված դեպքերում և կարգով էլեկտրական էներգիան (հզորությունը) վաճառում են մրցակցային պայմաններով՝ չկարգավորվող գներով։

4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

12. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենքների, սույն լիցենզիայի, Ցանցային կանոնների, Առևտրային կանոնների, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին:

13. Լիցենզավորված անձի կողմից Կայանների կառուցումը և շահագործումն իրականացվում է համաձայն էլեկտրակայանի նախագծային փաստաթղթերով նախատեսված սխեմայի՝ բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

14. Լիցենզավորված անձը շուկայի օպերատորի հաշվառմանն է ներկայացնում մեծածախ շուկայում կնքված, ինչպես նաև էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանում նախատեսող պայմանագրերը՝ համաձայն Շուկայի կանոնների:

15. Լիցենզավորված անձը պարտավոր է կատարել էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի հրահանգները՝ համաձայն Ցանցային կանոնների:

16. Լիցենզավորված անձի 25 և ավելի տոկոս բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման, գրավադրման, ինչպես նաև Լիցենզավորված անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն տվող բաժնեմասի (բաժնետոմսի, փայի)՝ անկախ քանակից, օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի սահմանած կարգով նախապես ստանալ Հանձնաժողովի համաձայնությունը:

17. Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման համար Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի սահմանած կարգով նախապես ստանալ Հանձնաժողովի համաձայնությունը:

18. Սույն լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել, իսկ դրանով ամրագրված էլեկտրական էներգիայի արտադրության գործառույթը որևէ ձևով փոխանցվել այլ անձի, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

19. Սույն լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

20. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ և այդ գործունեության մեջ ներգրավված գույքի հասանելիությունը Հանձնաժողովի ներկայացուցիչների համար:

21. Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական այլ գործունեությունը չպետք է վտանգի սույն լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը, իսկ լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը

պետք է առանձնացված լինի Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից:

22. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգերին և ձևերին համապատասխան լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել Հանձնաժողով:

23. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի պահանջով ներկայացնել լիցենզավորված գործունեության վերաբերյալ սպառիչ տեղեկատվություն, ինչպես նաև պատասխանել Հանձնաժողովի գրավոր հարցադրումներին 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Հանձնաժողովի կողմից այլ ժամկետներ սահմանված չեն:

24. Լիցենզավորված անձը պարտավոր է յուրաքանչյուր տարի իրականացնել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտ և աուդիտորական եզրակացությունն ստանալուց հետո, իսկ տարեկան հաշվետվությունը բաժնետերերի կամ մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից հաստատվելու դեպքում՝ դրանց հաստատումից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, աուդիտորական եզրակացության և աուդիտ իրականացված ֆինանսական հաշվետվությունների պատճենները ներկայացնել Հանձաժողով, ինչպես նաև հրապարակել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am կայքում:

25. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:

26. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը հրապարակային է, եթե դա Լիցենզավորված անձի կողմից չի համարվում գաղտնի և նշված չի որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձի ներկայացրած գաղտնապահական տեղեկատվության հետ կապված հարցերը կարգավորվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով:

27. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են սույն լիցենզիայի պայմանների խախտումների կամ կարող են դառնալ սույն լիցենզիայի պայմանների խախտումների անմիջական պատճառ:

28. Սույն լիցենզիայի պայմաններով նախատեսված իրազեկումը, այդ թվում փաստաթղթերի հանձնումը, կատարվում է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

29. Մինչև 2005 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում սակագնի հաշվարկում ընդգրկված տարեկան շահագործման և պահպանման ծախսերը կկազմեն 1.819 մլն ԱՄՆ դոլար (առանց ԱԱՀ-ի):

30. 2003 թվականի մայիսի 16-ից մինչև 2008 թվականի մայիսի 16-ը Հանձնաժողովը հաշվարկային մաշվածության և շահույթի միջոցով կապահովի 25 մլն ԱՄՆ դոլարի ներդրումների վերադարձ, այն պայմանով, որ կիրառվող երկդրույք սակագնի հաշվարկում ներառված հասույթի և արտադրության ծավալի հիման վրա

հաշվարկված միադրույք սակագինը պակաս չի լինի 0.02 ԱՄՆ դոլարից՝ 1 կՎտժ-ի դիմաց:

31. Սույն լիցենզիայի պայմանների 29-րդ և 30-րդ կետերում նշված ժամկետների համար սակագները հաշվարկվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հիմքում դրված ԱՄՆ դոլարի և Հայաստանի Հանրապետության դրամի տվյալ տարվա հաշվարկային միջին փոխարժեքի հիման վրա: Եթե Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական տվյալներով փաստացի միջին փոխարժեքի շեղումը հաշվարկայինից գերազանցում է 3.0%-ը, ապա կկատարվի սակագների վերանայում, բայց ոչ հաճախ, քան 6 ամիսը մեկ անգամ:

32. 2008 թվականի մայիսի 16-ից հետո, շահույթի հաշվարկման բազա կհանդիսանա սույն լիցենզիան ստանալու օրվանից մինչև սակագնի հաշվարկման պահը Հանձնաժողովի հետ համաձայնեցված և իրականացված ներդրումների արժեքի և դրանց հաշվին ստեղծված հիմնական միջոցների կուտակված մաշվածության տարբերությունը: Թույլատրելի շահութաբերության նորման կորոշվի որպես ներդրումների համար ներգրավված սեփական (բաժնետիրական) և փոխառու կապիտալի միջին կշռութային արժեք: Սեփական կապիտալի արժեքը կորոշվի ելնելով Հայաստանի Հանրապետության միևնույն ռիսկերի պայմաններում գործող ընկերությունների բաժնետիրական կապիտալի արժեքից, բայց կլինի ոչ պակաս քան 8%:

33. 2008 թվականի մայիսի 16-ից հետո, մաշվածությունը կհաշվարկվի գծային եղանակով՝ ելնելով սույն լիցենզիան ստանալու օրվանից մինչև սակագնի հաշվարկման պահը Հանձնաժողովի հետ համաձայնեցված և իրականացված ներդրումների հաշվին ստեղծված հիմնական միջոցների արժեքից և դրանց օգտակար ծառայության ժամկետից:

34. Սակագնային հաշվարկներում կընդգրկվեն «Սևան-Հրազդանյան կասկադ» փակ բաժնետիրական ընկերության կողմից մինչև սույն լիցենզիա ստանալու օրը վերցրած և Լիցենզավորված անձին փոխանցված վարկային պարտավորությունների սպասարկման և մարման ծախսերը, նրանց առաջացման տարվանից սկսված:

5. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

35. Լիցենզավորված գործունեության վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

36. Լիցենզավորված գործունեության վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովի ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք՝ Հանձնաժողովի սահմանած կարգով:

37. Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է աջակցի Հանձնաժողովին՝ անհրաժեշտության դեպքում տրամադրելով համապատասխան փաստաթղթեր:

6. ՏՈՒԺԱՆՔՆԵՐԸ

38. Լիցենզավորված անձի կողմից «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը, սույն լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել տուժանքների հետևյալ տեսակները՝

1) նախազգուշացում.
2) օրենքով սահմանված տուգանքներ.
3) լիցենզիայի գործողության կասեցում.
4) լիցենզիայի գործողության դադարեցում:

39. Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ սույն լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

40. Լիցենզավորված անձը սույն լիցենզիայի պայմանների 38-րդ կետում նշված խախտումների համար պատասխանատվություն չի կրում, եթե դրանք հետևանք են ֆորս մաժորի: Սույն լիցենզիայի պայմանների իմաստով ֆորս մաժոր է համարվում ցանկացած հանգամանք կամ դեպք (դրա հետևանք), որը հանգեցրել է (հանգեցնում կամ կարող է հանգեցնել) Լիցենզավորված անձի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին՝

1) չի գտնվում Լիցենզավորված անձի վերահսկողության ներքո.
2) Լիցենզավորված անձը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար.
3) Լիցենզավորված անձը տեղեկացրել է Հանձնաժողովին իրազեկվելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ մասին իրազեկվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

41. Սույն լիցենզիայի պայմանների իմաստով, մասնավորապես, ֆորս մաժոր են՝

1) բնական և տեխնածին աղետները, համաճարակները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), ատոմային, քիմիական կամ կենսաբանական աղտոտում, գործադուլները, հասարակական անկարգությունները.
2) ապստամբությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ներխուժումները, զինված հակամարտությունները, արտաքին թշնամու

գործողությունները կամ շրջափակումը, որոնցից յուրաքանչյուրը տեղի է ունենում Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ ներգրավում է այն, ինչը գոյություն չի ունեցել կամ չէր կարող ողջամտորեն կանխատեսվել.

3) պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ այլ իրավասու կազմակերպության ակտը, գործողությունը կամ անգործությունը այն դեպքում, երբ դրա արդյունքում չի տրամադրվել, չի երկարաձգվել սույն լիցենզիայով ամրագրված պարտավորության կատարման համար անհրաժեշտ որևէ թույլտվություն կամ իրավունք կամ խոչընդոտվել է այդ պարտավորության կատարումը, պայմանով, որ Լիցենզավորված անձը գործել է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

42. Սույն լիցենզիայի պայմանների 41-րդ կետը չի սահմանափակում Լիցենզավորված անձի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր ու հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ սույն գլխի պահանջներին բավարարելու դեպքում դրանք ևս ֆորս մաժոր ճանաչելու համար:

7. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

43. Սույն լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

44. Հանձնաժողովի նախաձեռնությամբ սույն լիցենզիայի փոփոխությունները կատարվում են Լիցենզավորված անձի համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նախատեսվող փոփոխություններն անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետության օրենքների և նորմատիվ իրավական ակտերի պատշաճ կատարումն ապահովելու համար:

45. Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած 15 օրյա ժամկետում սույն լիցենզիայի վերաձևակերպման հայտ ներկայացնել Հանձնաժողով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերություն

(ընկերության անվանումը)

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Աղոնցի 10բ

(գտնվելու վայրը)

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՍԱՖԱՐՅԱՆ

Հավելված №1

Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության
№0108 լիցենզիայի պայմանների

տրված է «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությանը

(լիցենզավորված ընկերության անվանումը)

ՑԱՆԿ

Սևան հիդրոէլեկտրակայանի ագրեգատների (սարքավորումների)

Հիմնական ագրեգատի (սարքավորման) անվանումը և կայանային համարը	Ագրեգատի (սարքավորման) մակնիշը	Ագրեգատի (սարքավորման) դրվածքային հզորությունը (կՎտ)	Շահագործման հանձնելու տարեթիվը
Տուրբին N 1	Շառ. առանցքային ¦Nohab§ (Շվեդիա)	17500	1949
Գեներատոր N 1	GS 2615 «ASEA» (Շվեդիա)	16960	1949
Տուրբին N 2	Շառ. առանցքային ¦Nohab§ (Շվեդիա)	17500	1949
Գեներատոր N 2	GS 2615 «ASEA» (Շվեդիա)	16960	1949
Տուրբին ս.կ.	Շառ. առանցքային ¦Nohab§ (Շվեդիա)	320	1950
Գեներատոր ս.կ.	CA - 106 ¦ASEA§ (Շվեդիա)	320	1950

ՑԱՆԿ

Հրազդան հիդրոէլեկտրակայանի ագրեգատների (սարքավորումների)

Հիմնական ագրեգատի (սարքավորման) անվանումը և կայանային համարը	Ագրեգատի (սարքավորման) մակնիշը	Ագրեգատի (սարքավորման) դրվածքային հզորությունը (կՎտ)	Շահագործման հանձնելու տարեթիվը
Տուրբին N 1	Շառ. առանցքային «VOITH» (Ավստրիա)	41580	1959
Գեներատոր N 1	SPFL – 706/50-24 «Siemens – Schuckert»	40800	1959

Տուրբին N 2 **Գեներատոր N 2**	Շառ. առանցքային «VOITH» (Ավստրիա) SPFL – 706/50-24 «Siemens – Shuckert»	**41580** **40800**	1959 1959

ՑԱՆԿ

Արգել հիդրոէլեկտրակայանի ագրեգատների (սարքավորումների)

Հիմնական ագրեգատի (սարքավորման) անվանումը և կայանային համարը	Ագրեգատի (սարքավորման) մակնիշը	Ագրեգատի (սարքավորման) դրվածքային հզորությունը (կՎտ)	Շահագործման հանձնելու տարեթիվը
Տուրբին N 1 **Գեներատոր N 1**	Շառ. առանցքային (ԼՄԳ) CB 465/210 – 16	**55200** **56000**	1953 1953
Տուրբին N 2 **Գեներատոր N 2**	Շառ. առանցքային (ԼՄԳ) CB 465/210 - 16	**55200** **56000**	1953 1953
Տուրբին N 3 **Գեներատոր N 3**	Շառ. առանցքային «KMW» (Շվեդիա) GS–2621 ASEA (Շվեդիա)	**55200** **56000**	1953 1953
Տուրբին N 4 **Գեներատոր N 4**	Շառ. առանցքային «KMW» (Շվեդիա) GS–2621 ASEA (Շվեդիա)	**55200** **56000**	1953 1953

ՑԱՆԿ

Արզնի հիդրոէլեկտրակայանի ագրեգատների (սարքավորումների)

Հիմնական ագրեգատի (սարքավորման) անվանումը և կայանային համարը	Ագրեգատի (սարքավորման) մակնիշը	Ագրեգատի (սարքավորման) դրվածքային հզորությունը (կՎտ)	Շահագործման հանձնելու տարեթիվը
Տուրբին N 1 **Գեներատոր N 1**	Շառ. առանցքային «VOITH» (Ավստրիա) SPFL – 666/46-20 «Siemens – Schuckert»	**24411** **23520**	1956 1956

Տուրբին N 2 Գեներատոր N 2	Շառ. առանցքային «VOITH» (Ավստրիա) SPFL – 666/46-20 «Siemens – Schuckert»	24411 23520	1956 1956
Տուրբին N 3 Գեներատոր N 3	Շառ. առանցքային «VOITH» (Ավստրիա) SPFL – 666/46-20 «Siemens – Schuckert»	24411 23520	1956 1956

ՑԱՆԿ

Քանաքեռ հիդրոէլեկտրակայանի ագրեգատների (սարքավորումների)

Հիմնական ագրեգատի (սարքավորման) անվանումը և կայանային համարը	Ագրեգատի (սարքավորման) մակնիշը	Ագրեգատի (սարքավորման) դրվածքային հզորությունը (կՎտ)	Շահագործման հանձնելու տարեթիվը
Տուրբին N 1 Գեներատոր N 1	Շառ. առանցքային Завод N3 им. Калинина ВВ 654-500 Эл. Сила	13600 12500	1937 1937
Տուրբին N 2 Գեներատոր N 2	Շառ. առանցքային Завод N3 им. Калинина ВВ 654-500 Эл. Сила	13600 12500	1937 1937
Տուրբին N 3 Գեներատոր N 3	Շառ. առանցքային Завод N3 им. Калинина ВВ 654-500 Эл. Сила	13600 12500	1937 1937
Տուրբին N 4 Գեներատոր N 4	Շառ. առանցքային Завод N3 им. Калинина ВВ 654-500 Эл. Сила	13600 12500	1936 1936
Տուրբին N 5 Գեներատոր N 5	Շառ. Առանցքային ЛМЗ SAV 347/110/16	26100 26000	1940 2003

Տուրբին N 6 **Գեներատոր N 6**	Շառ. Առանցքային ЛМЗ SAV 347/110/16	**26100** **26000**	1944 2003

ՑԱՆԿ

Երևան ՀԷԿ-1 հիդրոէլեկտրակայանի ագրեգատների (սարքավորումների)

Հիմնական ագրեգատի (սարքավորման) անվանումը և կայանային համարը	Ագրեգատի (սարքավորման) մակնիշը	Ագրեգատի (սարքավորման) դրվածքային հզորությունը (կՎտ)	Շահագործման հանձնելու տարեթիվը
Տուրբին N 1 **Գեներատոր N 1**	Շառ. առանցքային ХТГЗ ВГС-440-120-20 Урал. Элаппарат	**22500** **22000**	1962 1962
Տուրբին N 2 **Գեներատոր N 2**	Շառ. առանցքային ХТГЗ ВГС-440-120-20 Урал. Элаппарат	**22500** **22000**	1962 1962

ՑԱՆԿ

Երևան ՀԷԿ-3 հիդրոէլեկտրակայանի ագրեգատների (սարքավորումների)

Հիմնական ագրեգատի (սարքավորման) անվանումը և կայանային համարը	Ագրեգատի (սարքավորման) մակնիշը	Ագրեգատի (սարքավորման) դրվածքային հզորությունը (կՎտ)	Շահագործման հանձնելու տարեթիվը
Տուրբին N 1 **Գեներատոր N 1**	Շառ. առանցքային Урал. гидромаш ВГС-325-49-20 Урал. Элаппарат	**5020** **5000**	1955 1955